ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ԱԼԵՔՍԻՅ Բ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ, Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Մայիսի 1-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով Հայաստան ժամանեց Մոսկվայի և Համայն Ռուսիոյ Պատրիարք Ալեքսիյ Բ-ն:

Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում Ռուսիոյ Հոգևոր Առաջնորդին դիմավորեցին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Շահեն Կարամանուկյանը, Երևանի քաղաքապետ Աշոտ Միրզոյանը, «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչության տնօրեն Մանուշակ Պետրոսյանը, Հայաստանում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Անդրեյ Ուոնովը, Ռուսաստանում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Յուրի Մկրտումյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, բարձրաստիճան հոգևորականներ և պաշտոնյաներ: Ալեքսիյ Բ Պատրիարքին և նրան ուղեկցող պատվիրակությանը, որը կազմված էր քսանութ հոգևորականներից՝ գլխավորությամբ Ռուս Եկեղեցու արտաքին հարաբերությունների վարիչ, Սմոլենսկի Կիրիլ միտրոպոլիտի, հայկական աղ ու հաց մատուցեցին: Ապա օդանավակայանում տեղի ունեցավ կարճատև հանդիպում լրատվական ծառայությունների ներկայացուցիչների հետ: Լրագրողների հարցերին պատասխանելուց հետո, Ալեքսիյ Բ Պատրիարքը և Գարեգին Ա Կաթողիկոսը, իրենց ընկերակցող շքախմբով, օդանավակայանից ուղևորվեցին դեպի Ս. Էջմիածին:

Մայր Աթոռի մուտքի մոտից խնկարկելով, «Հրաշափառ»-ի երգեցողության ուղեկցությամբ երկու Եկեղեցիների Հոգևոր Պետերն առաջնորդվեցին դեպի Մայր Տաճար: Այստեղ, հետզոհաբանական աղոթքի, կատարվեց Բարիզալստյան արարողություն, որից հետո Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը ողջույնի խոսքով դիմեց մեծահարգ հյուրին.

«Փառք և գոհություն եմ տալիս Բարձրյալն Աստծուն, որ մեզ շնորհեց հոգևոր եղբայրության և միասնության այս բացառիկ պահը Ձերդ Սրբությունը ողջունելու Քրիստոսադրոշմ այս սրբավայրին՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Ամենայն Հայոց Կաթողիկոսության հոգևոր այս կենտրոնին մեջ ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Ի՜նչ հոգեղից է այս պահը, երբ գոհաբանական և միասնական աղոթքով ենք բացում Ձեր անդրանիկ այցելությունը ի Մայր Հայաստան և ի Ս. Էջմիածին: Աղոթքը առ Աստված՝ սի՛րտն է քրիստոնեական կրանքին և հոգին է քրիստոնեական եղբայրության:

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԱՂ ՈՒ ՀԱՑՈՎ ԴԻՄԱՎՈՐՈՒՄ «ՁՎԱՐԹՆՈՑ» ՕԳԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ

Այս տեղը, ուր կանգնած ենք այժմ, առաջի Աստծո, սրբազնասուրբ վեհավայրն է ողջ հայության ի Մայր Հայաստան և ի սփյուռս աշխարհի: Այս տեղը Ս. Էջմիածինն է, մեր Հայ ազգի, որպես քրիստոնեական ազգի և պետության ծննդավայրը, մի տեսակ հայկական Բեթղեհեմ մեր Հայաստան աշխարհում: Այստեղ էր, ուր մեր Եկեղեցվո հավատքի հայրը ճանաչված Ս. Գրիգոր Լուսավորիչը իր տեսիլքին մեջ տեսավ մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի լուսեղեն էջքը ի Հայաստան: Այստեղ էր, որ Հայոց Տրդատ արքան 301 թվին պետական կրոն հռչակեց քրիստոնեությունը, որը Քրիստոսի առաքյալներից Ս. Թադեոսի և Ս. Բարթողիմեոսի քարոզությամբ էր սկիզբ առել մեր երկրում և մարտիրոսների արյան վկայությամբ էր շաղախել հողը հայրենի:

Հազար յոթ հարյուր տարիներ շարունակ հայ ժողովրդի կյանքում քրիստոնեական հավատքի փարոսը հանդիսացող Ս. Էջմիածնում, ինձ համար հոգեկան անչափելի ուրախություն է Ձեզ և Ձեզի ընկերակցող պատվիրակության հարգարժան անդամները ողջունել հանուն մեր եպիսկոպոսական դասին, մեր հոգևորականներին, մեր Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին, Մայր Աթոռ Միաբանության, պաշտոնեության, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմին և ուսանողության ու հավատացյալ ժողովուրդին:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Ռուսական Օրթոդոքս Եկեղեցու հարաբերությունները դարերի վրա տարածված և արմատացած ավանդություն է, եղբայրական գործակցության ոգիով հատկանշված: Ձեր այս այցելությունը նոր և կարևոր հանգրվան մն է այդ սերտ գործակցության ամրացմանը մեջ: Եղբայրական փոխհարաբերությունների զարգացումը առաջնահերթ անհրաժեշտություն է այս օրերին մանավանդ, երբ մեր երկու երկրները՝ Ռուսիոն Դաշնությունը և Հայաստանի Հանրապետությունը, և մեր երկու Եկեղեցիները՝ Ռուս Օրթոդոքս և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիները, դիմագրավում են նո՛ր կացություններ,

ազատության պայմանների վերստեղծումով, կացություններ, որոնք պահանջում են, որ մենք գործենք սերտ ներդաշնակությամբ:

Ահա թե ի՜նչ ոգով և ի՜նչ սրտբաց զգացումներով ողջունում ենք Ձեր ներկայությունը այս սրբազան և պատմական հողի վրա և հառաջիկա երկու օրերի ընթացքում ցանկանում ենք, որ մեր Եկեղեցին և մեր ժողովուրդը Հայաստանում վայելեն Ձեր սերն ու օրհնությունը, աղոթքն ու զորակցությունը:

Թող Աստված զորացնի Ռուս Օրթոդոքս Եկեղեցին և իր հավատացյալ ժողովուրդը»:

Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև Նորին Սրբություն Ալեքսիյ Բ Պատրիարքը.

«Ձերդ Սրբություն, սիրեցյալ ի Քրիստոս, Մայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա,

Գերաշնորհ սրբազան հայրեր, Արժանապատիվ հայրեր, թանկագին եղբայրներ և քույրեր՝ զավակներ Հայաստանյայց Առաքելական սուրբ Եկեղեցու:

Այս սրբազան տոնական օրերին, երբ մենք վերապրում ենք շնորհատու ուրախությունը Քրիստոսի Հարության, սրտանց ողջունում եմ Ձեզ առաքելական ավետիսի խոսքերով.

«Քրիստոս Հարյավ ի մեռելոց»:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսը «միայն մեկ պատարագ մատուցեց մեղքերի համար և մշտնջենապես նստեց Աստուծո աջ կողմում» (Եբր. Ժ 12) և Իր հետ միասին երկինք բարձրացրեց աստվածացված մարդկային բնությունը: Եվ այժմ, ճանապարհը աստվածանմանվելու և աստվածացման բաց է յուրաքանչյուր մարդու համար, քանզի Քրիստոսի Ջատիկը մեզ համար ճշմարտապես անցումն է «մահվանից դեպի կյանք և երկրից դեպի երկինք»:

Խորին երախտագիտությամբ է լցվում սիրտս առ Աստված, երբ ես գտնվում եմ Հայաստանի սրբազան հողի վրա, ուր Աստծո Խոսքի քարոզությունը լսվել է հնագույն ժամանակներից:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ունի մեզ համար մի շատ արժեքավոր աղբյուր ավանդության, որը գալիս է Սուրբ Առաքյալներ Թադեոսից և Բարդուղիմեոսից, Գրիգոր Լուսավորչից և Կապադովկյան Կեսարիայի Արքեպիսկոպոս Բարսեղ Մեծից: Արդեն Ե դարում Սահակ Մեծ Կաթողիկոսի և Մեսրոպ Մաշտոցի ջանքերով հայերեն թարգմանվեցին Սուրբ Գիրքն ու սուրբ հայերի գործերը: Հիմքերը դրվեցին ազգային-եկեղեցական գրականության, որը հետագայում տվեց այնպիսի մեծ դեմքեր, ինչպիսին էր Գրիգոր Նարեկացին, որի անունը մեծապես հայտնի է նաև Ռուսաստանում:

Բազմադարյան բարեկամությունը, որի արմատները հասնում են հազարամյա հնության մի շրջանի, կապում է Հայաստանի և Ռուսաստանի ժողովուրդներն ու Եկեղեցիները: Մենք երախտագիտությամբ ենք հիշում հայ շինարարների գործերը, որոնց վարպետությունը հոյաշեն տաճարներով զարդարել է հնամենի Կիևը, և սրբությամբ ենք հարգում հիշատակը Հայ Եկեղեցու հավատքի և բարեպաշտության նվիրյալների: Հայ և Ռուս Եկեղեցիները մեր ժողովուրդների հետ միասին հարյուրամյակներ շարունակ կիսել են ուրախությունները ու դժբախտությունները ընդհանուր պատմական ճակատագրի: Հայ Առաքելական Եկեղե-

ցու զավակները քիչ ջանքեր չեն ներդրել Ռուսաստանի բարօրության և ծաղկման համար և նրանցից շատերն այնտեղ գտել են օթևան և պաշտպանություն աղետներից, որոնք շատ հաճախ են տեղացել բազմաչարչար հայ ժողովրդի գլխին: Եվ վերջին պատահած ծանր դժբախտության՝ Հայաստանի երկրաշարժի ժամանակ, որը հազարավոր կյանքեր խլեց, ռուս կամավորները հայ ժողովրդի հետ միասին մարդկային կյանքեր էին փրկում:

Մենք ուրախ ենք, որ մեր օրերում, երբ Հայաստանը ձեռք է բերել իր պետական անկախությունը, մեր երկու մեծ Եկեղեցիների և ժողովուրդների միջև մտերմությունն ու փոխըմբռնումը շարունակվում է պահպանվել: Դրա վառ օրինակն է մեր Եկեղեցիների համագործակցությունը դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ, և Ռուս Եկեղեցին այս նպատակով գործադրում է բոլոր հնարավոր միջոցները:

Ռուս և Հայ Եկեղեցիների երկխոսության արդյունավետ համագործակցությունը, անտարակույս, նպաստում է մեր երկու, միմյանց մոտ Եկեղեցիների ընտանիքների միջև աստվածաբանական երկխոսության հաջող զարգացմանը: Եկեղեցու պատմական բաժանումը, որ տեղի ունեցավ Ե դարում Քաղկեդոնի ժողովի ժամանակ, շարունակում է մնալ իբրև անդարմանելի վերք Եկեղեցու Մարմնի վրա: Եվ արդ, երբ մենք աշխարհականացված աշխարհում ուղղափառ վկայությունների համատեղ ուղիներ ենք փնտրում, մենք ձգտում ենք հատուկ ջանքեր ներդնելու այդ ողբալի բաժանման շուտափույթ հաղթահարման համար: Մենք բարձր ենք գնահատում Ուղղափառ և Միենջքաղկեդոնական Եկեղեցիների միջև արդեն ավելի քան 30 տարի շարունակվող աստվածաբանական երկխոսության արդյունքները: Ու թեև տակավին չլուծված են մնում եկեղեցապատմական, եկեղեցաբանական և ընթացակարգային (պրոցեդուրային) բնույթի մի շարք խնդիրներ, մենք ուրախանում ենք ունեցած նվաճումներով և այդ ընկալում ենք Աստուծո հատուկ ողորմության նշան:

Իրավիճակը, որում գտնվում է այսօր աշխարհը, հատուկ պատասխանատվություն է դնում բոլոր քրիստոնյաների ուսերին, առավելապես նրանց, ովքեր իրենց համարում են Հին Անբաժան Եկեղեցու ավանդության ժառանգորդներ: Մեր առաքելությունն է՝ մշտապես և ամեն օր վկայել Քրիստոսի ճշմարտության մասին, կոչ անել պահպանելու քրիստոնեական բարոյական և հոգևոր արժեքները, հակառակ անհավատությամբ փոթորկված այս աշխարհի գայթակղություններին: Իր իսկ՝ Տիրոջ կողմից մեզ վրա դրված է սրբազան պարտականությունը քարոզելու Քրիստոսին և Ավետարանը այնտեղ, որտեղ Տերը կոչում է ծառայելու մարդկությանը:

Այս մտածումներով և զգացումներով կրկին ու կրկին անգամ սրտագին ողջունում եմ Ձերդ Սրբությանը և Ձեր Աստվածապահպան Հոտին և ի սրտե ցանկանում եմ Աստուծո անհատնում շնորհատու օգնություն Հայ Առաքելական Եկեղեցուն և ողջ հայ ժողովրդին.

«Ճշմարտապես Հարյավ Քրիստոս»:

Ողջույնի խոսքեր փոխանակելուց հետո Մայր Տաճարից հանդիսավոր թափորը ուղևորվեց դեպի Վեհարանի գահասրահ, ուր տեղի ունեցավ երկու Եկեղեցիների պատվիրակությունների փոխներկայացում:

Ճաշից ու կարճատև հանգստից հետո Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիյ Բ-ն և նրա գլխավորած պատվիրակությունը, ուղեկցությամբ Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի, բարձրաստիճան հոգևոր հայրերի և պաշտոնյաների, երեկոյան ներկա գտնվեցին Երևանի ֆիլհարմոնիկ դահլիճում՝ ի պատիվ Ալեքսիյ Բ Պատրիարքի կազմակերպված տոնական համերգին:

Համերգի ավարտին երկու Եկեղեցիների Հոգևոր Պետերը ողջույնի ջերմ խոսքեր ուղղեցին հանդիսության մասնակիցներին:

ԱՅՑԵԼՈՒԹՈՒՆ ԽՈՐ ՎԻՐԱՊ

ԲԻԲԼԻԱԿԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՅՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈ

Մայիսի 2-ի առավոտյան Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը և Նորին Սրբություն Ալեքսիյ Բ Պատրիարքը, բարձրաստիճան հոգևոր հայրերի, երկու երկրների դեսպանների, պաշտոնատար այլ անձանց հետ միասին, ուղևորվեցին դեպի Խոր Վիրապ: Ճանապարհին հանդիսավոր թափորին դիմավորեցին Արարատի մարզպետ Դավիթ Զադոյանը, մարզպետարանի աշխատակիցներ: Մեծահարգ հյուրերին բարի գալուստ մաղթելով՝ Պրն. Զադոյանը և մարզպետարանի աշխատակիցները նրանց ընկերակցեցին մինչև Խոր Վիրապ: Շրջելով վանքի տարածքում և բացատրություններ ստանալով նվիրական այս հոգևոր կենտրոնի մասին՝ եկեղեցու հովիվ Տ. Մխիթար քահանայի կողմից, Ալեքսիյ Բ Պատրիարքը իր հուզմունքն ու ապրումները արտահայտեց, որ գտնվում է այսպիսի մի սրբազնագույն վայրում՝ բարձր գնահատելով հոգևոր կենտրոնի՝ որպես համաքրիստոնեական սրբավայրի արժեքը:

Սպա երկու Եկեղեցիների Հոգևոր Առաջնորդները հանդիպեցին տեղի ռուս սահմանապահ կորքերի և հրամանատարական կազմի հետ:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՍ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻՆ

ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՍՈՏ

Մայիս 2-ին Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն ընդունեց Նորին Սրբություն Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիյ Բ-ին և Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Պրն. նախագահը ողջունելով Ռուս Եկեղեցու Հոգևոր Առաջնորդին, նրա այցը գնահատեց որպես կարևոր իրադարձություն և գոհունակությամբ շեշտեց, որ Հայ Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջև հարաբերությունները կարգանում են երկու ժողովուրդների և պետությունների միջև հարաբերությունների ոգուն համապատասխան:

Նախագահը կարևորեց Ալեքսիյ Բ-ի խաղաղարար միջնորդական ջանքերը, որոնք նույնպես նպաստեցին, որպեսզի ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտությունը չստանա կրոնական բնույթ:

Շնորհակալություն հայտնելով արտառուշ ընդունելության և ջերմ խոսքերի համար, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարքը արտահայտեց հայ ժողովրդի նկատմամբ ռուս ժողովրդի տածած բարի զգացմունքները: Նորին Սրբությունը բարձր գնահատեց Հայ Առաքելական Եկեղեցու 1700-ամյա գործունեությունը, որի շնորհիվ պահպանվել է հայ ժողովրդի հոգևոր ու բարոյական նկարագիրը, ազգային ինքնությունը:

Ընդունելությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության Արտաքին Գործոց նախարար Վահան Փափազյանը, հայ և ռուս բարձրաստիճան հոգևորականներ և պաշտոնատար անձինք:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ

ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ

<< նախագահի մոտ ընդունելությունից հետո Ռուս և Հայ Եկեղեցիների Պետերը, իրենց ուղեկցող թափորի ընկերակցությամբ, ճանապարհվեցին դեպի Ծիծեռնակաբերդի բարձունք՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին: Հուշարձանի մոտ նրանց դիմավորեց Երևանի քաղաքապետ Աշոտ Միրզոյանը: Մեծահարգ հյուրը նախ այցելեց Ցեղասպանության թանգարան, ծանոթացավ այնտեղ պահվող փաստաթղթերին ու լուսանկարներին, որից հետո իր ապրումների ու խոհերի մասին գրանցումներ արեց այցելուների գրքում:

Հուշակոթողին ծաղկեպսակ դնելուց հետո Ալեքսիյ Բ Պատրիարքն ու Գարեգին Ա Կաթողիկոսը Հոգեհանգստյան աղոթք մատուցեցին: Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց Ռուսիո Պատրիարքին, որ «այս քրիստոնեական և մարդկային եղբայրության աքանչելի արտահայտությունը ունեցավ՝ այցելելով Ծիծեռնակաբերդ, թանգարան՝ վկան դառնալով անհերքելի փաստերին դարիս մեծագույն ցեղասպանության»:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՇԿԵՐՈՒՅԹ՝ Ի ՊԱՏԻՎ ԱԼԵՔՍԻՅ Բ ՊԱՏՐԻԱՐՔԻ

Մայիսի 2-ին «Արմենիա» հյուրանոցում, ի պատիվ Մոսկվայի և Համայն Ռուսիո Ալեքսիյ Բ Պատրիարքի, Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից տրվեց պաշտոնական հյուրասիրություն:

Մեկ անգամ ևս ողջունելով և բարձր գնահատելով Ռուսիո Պատրիարքի այցը ի Հայաստան և Ս. Էջմիածին, Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսն ասաց.

«Քրիստոնեական տարբ սիրով և եղբայրական ջերմ զգացումներով ողջունում ենք Ձեր առաջին պաշտոնական այցը Հայաստանյայց Եկեղեցու հոգևոր կեդրոնին, Ամենայն Հայոց Կաթողիկոսության, ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին և ի Հայաստան:

Մեր գահակալության օրից այս կողմ, անցնող մեկ տարվա ընթացքում, Դուք ահա եղաք առաջին հոգևոր պետը մի պատկառելի ու սիրելի Եկեղեցու՝ Ռուս Օրթոդոքս Եկեղեցու, որ այցելության եկաք Մեզի՝ ընդառաջելով Մեր հրավերին: Դա իր յուրահատուկ և մեծ նշանակությունը ունի Մեզ համար:

Մենք քաղցր հիշատակներով մտաբերում ենք, որ տասն ամիսներ առաջ Հայաստանից դուրս Մեր առաջին այցելությունը տվեցինք Ձեզ և Ռուս Օրթոդոքս Եկեղեցուն՝ եղբայրական սիրո և փոխադարձ հասկացողության ու գործակցության մթնոլորտում Մոսկվայի մեջ: Անձամբ վկան եղանք այն լայնածավալ գործունեության, զոր այնքան ակնիրումով, եռանդով և հարատևությամբ հառաջ եք տանում Ձեր հոգևորականների հետ միասին Օրթոդոքս Եկեղեցու հավատքն ու ավանդությունները վերակենդանացնելու և տարածելու համար Ձեր Եկեղեցու հավատացյալների մեջ:

Այսօր ահա Դուք եք եկել Մեզի և Ձեր այցելությունը վստահաբար դառնալու է մեր Եկեղեցու, ժողովուրդի և հայրենիքի համար մի օրհնաբեր դեպք, որը առավել ևս ամրացնելու է դարավոր այն սերտ կապերը, որոնք գոյություն են ունեցել մեր երկու Եկեղեցիների, ժողովուրդների և հայրենիքների միջև:

Սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս,

Դուք և Ձեզ ընկերակցող պատվիրակության հարգարժան անդամները քաջատեղյակ եք Հայ Եկեղեցու և ժողովրդի պատմությանը, որը ահավասիկ տասնյոթ դարեր շարունակ, քրիստոնեության պետական կրոն հռչակումից սկսյալ (301 թ.) խմորվել և դրոշմվել է Քրիստոսի Ավետարանի ճշմարտություններով, բարոյական ուսուցումների սկզբունքներովը և հոգևոր արժեքների իրագործումովը:

Մեր քրիստոնեական պատմության մեջ, հատկապես վերջին տարիներին, կարևոր տեղ են գրավել և վճռական դեր են խաղացել այն հարաբերությունները, որոնք ստեղծվել են մեր երկու Եկեղեցիների միջև: Ներկայումս քրիստոնեական ընդհանուր աշխարհում միջեկեղեցական հարաբերությունները դարձել են Եկեղեցիների միջև փոխադարձ ճանաչման և հասկացողության, համերաշխ գործակցության առիթներ և միջոցներ ի խնդիր քրիստոնեական միության վերստեղծման արդի քրիստոնյա աշխարհի կյանքում և վկայության այլազան մարզերում: Մեր Եկեղեցիները որդեգրել են գործակցության ուղիներ և շարունակելու են հառաջանա՛լ այդ ուղիներով:

Անցնող տասնամյակի ընթացքում շատ բան փոխվեց մեր ապրած ամբողջ տարածաշրջանում, երբ համայնավարական հակաստվածյան գաղափարաբանությունն ու վարչակարգը փուլ եկան և ազատության ուղիներ բացվեցին մեր Եկեղեցիների և ժողովուրդների կյանքում: Ազատությունը իր հետ բերեց նոր մարտահրավերներ մեր Եկեղեցիների համար: Քրիստոնեական հավատքի վերարթնացումը, մեր Եկեղեցիների օրթոդոքս ավանդության տվյալներով սնված, մեր հասարակաց և ավագ պարտականությունն է, որը մեզ դնում է գործակցության մի նոր դարաշրջանի առաջ: Մեր ցանկությունն է, որ հաճախակի հանդիպումներով, խորհրդակցական քննարկումներով և գործնական ծրագրերով մեր հոգևորականները մեր երկուսի վերին հայրախնամ հոգածությամբ և քաջալերանքով լծվեն ալնպիսի աշխատանքների, որոնց միջից մեր Եկեղեցիները իրար զորացնեն իրենց փորձառությունները կիսելով իրարու հետ նույն և մեկ Քրիստոսի ծառայության առաքելության մեջ:

Ձեր այս օրհնաբեր այցելությունը Մեզ համար մի գեղեցիկ և պատեհ առիթ է, որ մի անգամ ևս Ձերդ Սրբության և Ռուս Օրթոդոքս Եկեղեցուն հայտնենք Մեր խոր շնորհակալությունները Ռուսական Դաշնության մեջ ապրող մեր Հայ Եկեղեցու զավակներին հանդեպ Ձեր ցույց տված սիրո և բարձր հոգատարության համար:

Այժմ, Քրիստոսի Հարության տոնին հաջորդող այս օրերին, մենք բոլորս ապրում ենք մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Հարության շունչովը: Վերանորոգության ուժն է, որ Հարուցյալ Փրկիչը մահվան վրա տարած իր հաղթանակովը զորություն է ներարկում մեր կյանքի և վկայության բոլոր բնագավառներում:

Տասն օրեր առաջ մենք՝ Հայաստանյայց Եկեղեցու սպասավորներս և զավակներս, մեր Հանրապետությունն ու ժողովուրդը նշեցինք Ապրիլյան Մեծ Եղեռնի զոհերի կենդանարար հիշատակը, հայության դեմ գործված ցեղասպանության 81-րդ տարեդարձի առիթով: Մեր նորացյալ և անկախացյալ հայրենիքում Մենք տեսանք մեր ժողովուրդի բարձրագույն աստիճանի հավատարմությունը նահատակների հիշատակին և կտակին: Մեր ժողովուրդը Հայաստանում և ամբողջ արտասահմանում՝ Միջին Արևելքից սկսյալ մինչև Եվրոպա և Հյուսիսային և Հարավային Ամերիկաներից սկսյալ մինչև Մայրագույն Արևելք, ամենուրեք, Քրիստոսի հարության հավատքին ներգործությունը տեսավ իր հայրենիքի և ազգի կյանքին մեջ նոր ու անկախ պետականության ստեղծումովը, որուն համար փառք ենք տալիս Ամենաբարի Աստծուն:

Մենք անհուն ցնծությամբ տեսնում ենք, որ Հարության շունչը զորեղ ազդեցությամբ գործում է մեր քույր Եկեղեցու՝ Ռուս Օրթոդոքս Եկեղեցու այժմյան կյանքում: Մոսկվայում, Մեր այցելության ընթացքում, Մենք հաստատեցինք ակնբախ նշանները այն հոգևոր վերանորոգության սքանչելի երևույթին, որի ամենից պերճախոս վկայություններից մեկը նկատեցինք Ս. Ամենափրկիչ Մայր Տաճարի վերակառուցման այնքան տենդագին աշխատանքը: Ի սրտե աղոթում ենք առ Աստված, որ լիառատ պտղաբերությամբ աճի և զարգանա այս նոր շրջանը Ռուս Օրթոդոքս Եկեղեցու և Ռուս ժողովուրդի կյանքում:

Մեր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին այժմ պատրաստվում է արժանավայել շուքով տոնելու և արժեքավորելու իր պաշտոնական հիմնադրման 1700-ամյակը թե՛ եկեղեցական և թե՛ ազգային-պետական, թե՛ միջեկեղեցական և թե՛ միջազգային մակարդակների վրա: Մեր իղձն է և սպասումը, որ Ռուս

Օրթոդոքս Եկեղեցին լինի միշտ մեր կողքին այս մեծապես նշանակալից տոնակատարության ընթացքում, որպեսզի այն լինի ոչ թե միայն անցյալին ընծայված հարգանքի արտահայտություն, այլ դառնա նոր աղբյուր վերակենդանության, մի տեսակ նոր հոգեզարթուստ մեր ժողովուրդի կյանքում, մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հավատքին խորացմանը և ծաղկմանը համար մեր երկրում և ողջ հայության կյանքում ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Թող Ձեր գալուստն ի Հայաստան դառնա հոգևոր վերարթնության մի մեծ նպաստ եղբայրական սիրով և միասնական գործակցությամբ քրիստոնեական հավատքի ուժեղացումովը մեր զույգ երկրների և ժողովուրդների կյանքում Աստծու փառքին և մարդկության բարիքին համար»:

Նորին Սրբություն Ալեքսիյ Բ Պատրիարքը իր պատասխան խոսքում ևս բարձր գնահատեց երկու ժողովուրդների դարերի խորքից եկող բարեկամությունն ու հոգևոր միասնությունը: Դիմելով Ամենայն Հայոց Հովվապետին և ներկաներին, մեծահարգ հյուրը ասաց.

«Ձերդ Սրբություն, Սիրեցյալ ի Քրիստոս, Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Գարեգին Ա, եղբայրական ընդունելության մեծարգո մասնակիցներ.

«Քրիստոս Հարյավ ի մեռելոց»:

Մեկ տարի էլ չի անցել այն օրից, երբ մենք ուրախությունն ունեցանք ընդունելու Ձերդ Սրբությանը Մոսկվայում: Այժմ եղբայրորեն հաղորդակցվելու նոր հնարավորություն է ընձեռվել մեզ Հայաստանի սուրբ հողի վրա: Մեզ մասնավորապես ուրախացնում է այն իրողությունը, որ մենք հանդիպում ենք Ս. Պահոց լուսաբեր օրերին, երբ երկինքն ու երկիրը, փառաբանելով Հարություն առած Տիրոջը, ցնծության մեջ են, և մենք ողջագուրվում ենք իրար հետ՝ երիցս համբուրվելով:

Ես խորապես երախտապարտ եմ Ձերդ Սրբությանը հրավերի համար և անկեղծորեն հավատում եմ, որ մեր հանդիպումը խթան կհանդիսանա մեր Եկեղեցիների միջև փոխըմբռնման հետագա զարգացմանը, կօգնի ավելի մոտից ճանաչելու իրար: Համոզված եմ նաև, որ Հայ և Ռուս Եկեղեցիների արդյունավետ համագործակցությունը կնպաստի մեր աստվածաբանական երկխոսության հաջող ավարտին և լիակատար միասնության շուտափույթ հասնելուն:

Մենք բարձր ենք գնահատում Ձերդ Սրբության ջանքերը՝ հոգ տանելու ողջ աշխարհով մեկ սփռված հայ հավատացյալների համար, Ձեր խաղաղարար գործունեությունը, որի մեջ Դուք մնում եք Ձեր երջանկահիշատակ նախորդի՝ Վազգեն Ա Կաթողիկոսի ավանդների հավատարիմ շարունակողը: Այդ առիթով մենք սիրով հիշում ենք անցյալ տարվա հունիսին Ձերդ Սրբության այցելությունը Մոսկվա և մեր համատեղ հանդիպումը Շեյխ Ուլ-Իսլամ Այլահիշուքյուր Փաշա-Զադեի հետ, երբ մենք քննարկեցինք Ղարաբաղյան հակամարտությունը խաղաղ ճանապարհով կարգավորելու խնդիրը և այդ կապակցությամբ ընդունեցինք համատեղ հայտարարություն:

Ներկայումս, մենք խոր ցավով ենք վերապրում Չեչնիայի ողբերգական իրադարձությունները, որի արդյունքում եղան մարդկային մեծ կորուստներ, որից տառապեցին տասնյակ հազարավոր խաղաղ բնակիչներ: Մենք աղոթում ենք և

անում ենք ամեն հնարավոր բան, որպեսզի բաղձալի խաղաղությունը հնարավորին չափ շուտ թնածի Հյուսիս-Կովկասյան հողում:

Ձերդ Սրբություն, ես հավատում եմ, որ Աստուծո օգնությամբ մեր ավանդական բարեկամական կապերը, որոնք այնպես անհրաժեշտ են մեր երկու Եկեղեցիներին և ժողովուրդներին, ապագայում էլ ի զորու կաճեն ու կզարգանան: Դրա համար մենք ունենք բազմաթիվ հնարավորություններ և մենք արդյունավետորեն պետք է օգտագործենք դրանք:

Նորից ու նորից ողջունում եմ Ձերդ Միրեցյալ Սրբությանը և այս Պահոց Ողջույնի ներկա բոլոր մասնակիցներին.

«Քրիստոս Հարյավ ի մեռելոց»:

Ողջույնի խոսքերից հետո տեղի ունեցավ նվերների փոխանակություն:

Պաշտոնական ճաշկերույթին մասնակցում էին Սկզային Ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանը, Երևանի քաղաքապետ Աշոտ Միրզոյանը, Հայաստանում Ռուսաստանի Դաշնության, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Մեծ Բրիտանիայի, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության, ինչպես նաև Ռուսաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիակոր դեսպանները, «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչության տնօրեն Մանուշակ Պետրոսյանը, Կրոնի Գործոց Խորհրդի նախագահ Լապար Սուջյանը, բարձրաստիճան պաշտոնյաներ, դիվանագիտական և միջազգային կազմակերպությունների այլ ներկայացուցիչներ:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՔԱՆԱՔԵՌԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԶՈՐԱԳՈՒՆԴ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Մայիսի 2-ին, երեկոյան ժամը 6-ին, Նորին Սրբություն Ալեքսիյ Բ Պատրիարքը և Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը, իրենց ուղեկցող բարձրաստիճան հոգևոր հայրերի և պաշտոնյաների հետ միասին, ճանապարհվեցին դեպի Քանաքեռի բարձունք՝ այցելություն տալով նախ այնտեղ տեղակայված ռուսական կորագնդին, ապա՝ ռուսական եկեղեցուն, ուր հավաքվել էին ռուս հանրությունի ներկայացուցիչները: Ե՛վ ռուսական կորագնդում, և՛ եկեղեցում մեծ ցնծությամբ դիմավորեցին Ռուսիո Հոգևոր Առաջնորդին: Եկեղեցում բարիգալստյան մաղթանք և երեկոյան աղոթք մատուցելուց հետո ներկաներին դիմեց Ալեքսիյ Բ Պատրիարքը. «Մեծ ուրախություն եմ ապրում, որ ձեզ հանդիպում եմ Քրիստոսի Հարությանը հաջորդող այս կվաղ օրերին, իմ ուրախ ապրումները կրկնապատկվում են՝ տեսնելով, որ դուք, սիրելի եղբայրներ ու քույրեր, այստեղ, հինավուրց Հայոց Հողում, ապրում եք հաշտ ու համերաշխ ձեր հայ եղբայրների ու քույրերի հետ միասին՝ կիսելով նրանց ուրախություններն ու դառնությունները: Թող Աստված օրհնի ձեզ և օգնի՝ ձեր բարի ցանկությունները իրագործելու մեջ: Հայաստանը ձեր երկրորդ հայրենիքն է: Այստեղ դուք ունեք ձեր աղոթատունը, այս գեղեցիկ եկեղեցին՝ իր

արժանի առաջնորդով, և պիտի խնդրեմ, որ ամեն մեր այցելության ժամանակ աղոթեք մեր երկու պետությունների ու Եկեղեցիների բարեկամության և բարգավաճման համար»:

Ներկաներին իր բարեմաղթանքի խոսքն ուղղեց նաև Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ ԵՎ ՀԱՆԴԻՍՈՒԹՈՒՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՎԵՀԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Ռուս համայնքին այցելելուց հետո, Ալեքսիյ Բ Պատրիարքը և Գարեգին Ա Կաթողիկոսը, ընկերակցությամբ իրենց ուղեկցող հանդիսավոր թափորի, վերադարձան Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Վեհարանում տեղի ունեցավ երկու Եկեղեցիների Գերագույն Հոգևոր Խորհուրդների անդամների խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվեցին Ռուս Ուղղափառ Եկեղեցու և Հայ Առաքելական Եկեղեցու հետագա համագործակցությանը վերաբերող հարցեր:

Խորհրդակցությունից հետո Վեհարանի Հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ Հոգևոր Ճեմարանի ուսանողների և Մայր Տաճարի երգչախմբերի համերգ, որի ընթացքում հնչեցին երկու ժողովուրդների հոգևոր երգեր:

Մինչ համերգի սկսվելը մեծահարգ հյուրին ողջույնի իր խոսքն ուղղեց Հոգևոր Ճեմարանի տեսուչ Հայկապուն Ծ. Վրդ. Նաքարյանը՝ Ռուսիո Պատրիարքի այցելությունը գնահատելով որպես մեծ իրադարձություն մեր ժողովրդի և Եկեղեցու կյանքում: Հոգեշնորհ Հայրը հանդես եկավ երկու Եկեղեցիների կրթական հաստատությունների փոխհամագործակցության մի քանի առաջարկներով, որոնք մեծ հավանության արժանացան Նորին Սրբություն Ալեքսիյ Բ Պատրիարքի և Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսի կողմից:

Համերգից հետո հանդիսության մասնակիցներին դիմեց Ալեքսիյ Բ Պատրիարքը՝ շնորհակալություն հայտնելով այդ գեղեցիկ հանդիպման, անկեղծ խոսքերի, ջերմ ընդունելության համար, և ասաց Պահպանիչ Աղոթք:

ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍ ՌՈՒՍ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ

Մայիսի 3-ի առավոտյան Վեհարանի Ընդունելությունների սրահում տեղի ունեցավ Ալեքսիյ Բ Պատրիարքի և Գարեգին Ա Կաթողիկոսի հանդիպումը տեղական և միջազգային տեղեկատվական գործակալությունների ներկայացուցիչների հետ:

Պատասխանելով լրագրողների հարցերին, երկու Եկեղեցիների Հոգևոր Առաջնորդներն էլ ներկա հանդիպումը գնահատեցին որպես պատմական կարևոր իրադարձություն: Այն շարունակությունն է հանդիսանում անցած տարի, հունիս ամսին, Գարեգին Ա Կաթողիկոսի

ԱԼԵՔՍԻՅ Բ ՊԱՏՐԻԱՐՔԸ ԵՎ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻՆ

Մոսկվա կատարած այցելության, և նոր էջ բացում Ռուս Ուղղափառ և Հայ Առաքելական Եկեղեցիների միջեկեղեցական հարաբերությունների պատմության մեջ: Ռուս և Հայ Եկեղեցիների Հոգևոր Պետերն ընդգծեցին, որ գտնվելով երկու մեծ հոբելյանների՝ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի 2000 և Հայաստանում Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակների նախաշեմին, առավել կարևոր է դառնում Ռուս և Հայ Եկեղեցիների անկեղծ և սերտ համագործակցությունը, միասնությունը՝ ընդհանրապես բոլոր քրիստոնյա Եկեղեցիների:

Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարքը հավաստիացրեց, որ այդ տոնակատարությունների կազմակերպական աշխատանքներում իր մեծ ներդրումը կունենա Ռուս Ուղղափառ Եկեղեցին:

Մամլո ասուլիսի ընթացքում քննարկվեցին նաև Եկեղեցի-պետություն, Եկեղեցի-բանակ, Եկեղեցի-ժողովուրդ, ինչպես նաև միջեկեղեցական հարաբերություններին առնչվող հարցեր:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՊԱՎԵԼ ԳՐԱՉՈՎԻ ԱՅՑԸ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Մայիսի 3-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Ռուսաստանի Դաշնության Պաշտպանության նախարար Պավել Գրաչովը՝ Ռուսաստանի Դաշնության բարձրաստիճան սպաների հետ միասին: Մեծահարգ հյուրին ուղեկցում էին Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը, Հայաստանի Հանրապետության Ազգային Անվտանգության նախարար Սերժ Սարգսյանը, պաշտոնատար այլ անձինք:

Վեհարանի ընդունելությունների սրահում Գեներալ Գրաչովին ընդունեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

ՌԴ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՊԱՎԵԼ ԳՐԱՉՈՎԻ ՀԵՏ ԶՐՈՒՅՑԻ ՊԱՀԻՆ

Այցելության պահին Ամենայն Հայոց Կաթողիկոսի հյուրն էին նաև Մոսկվայի և Համայն Ռուսիոց Պատրիարք Ալեքսիյ Բ-ն, Հայաստանում ՌԴ արտակարգ և լիապոր դեսպան Անդրեյ Ուռնովը, Ռուսաստանում ՀՀ արտակարգ և լիապոր դեսպան Յուրի Մկրտումյանը: Վեհափառ Հայրապետը ողջունելով մեծահարգ հյուրերին, ընդգծեց պահի կարևորությունը, քանի որ հայ ժողովրդի համար սրբազնագույն այս վայրում են գտնվում ռուս ժողովրդի հոգևոր և կինվորական պետերը՝ ի դեմս Ալեքսիյ Բ Պատրիարքի և գեներալ Գրաչովի:

Ջերմ կրոյցի ընթացքում խոսվեց հայ և ռուս ազգային բանակների համագործակցության, երկու Եկեղեցիների միասնության և երկու ժողովուրդների բարեկամության մասին: Նշվեց, որ այդ բարեկամությունը գալիս է դարերի խորքերից և ավելի ամրանալու ու կարգանալու միտում ունի: Գեներալ Գրաչովը տեղեկացրեց, որ վերջին երկու տարիների ընթացքում Ռուս Եկեղեցու աջակցությամբ ազգային բանակում շատ բան է արվել կինվորների հոգևոր պահանջմունքները բավարարելու համար, կառուցվել են աղոթատներ և որ ամենակարևորն է, հաղորդակցվելով Աստծո հետ ավելի է բարձրացել ռուս կինվորի բարոյական ոգին:

Որպես հուշ այդ գեղեցիկ հանդիպման Վեհափառ Հայրապետը գեներալ Գրաչովին նվիրեց Ս. Էջմիածնի և Արարատի քանդակապարդ պատկերներով արծաթե հուշանվեր, «Էջմիածնի զանձերը» նկարապարդ գիրքը: Ռուսաստանի Դաշնության Պաշտպանության նախարարը Վեհափառ Հայրապետին նվիրեց ռուսական սրբապատկեր՝ միջին դարերի բարձրարժեք մի գործ և ուրալյան քարից պատրաստված կարդատուփ:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԸ, ԱԼԵՔՍԻՅ Բ ՊԱՏՐԻԱՐՔԸ ԵՎ ԳԵՆԵՐԱԼ ԳՐԱՉՈՎԸ ԾԱՂԿԵՊՍԱԿ ԴՐԵՑԻՆ 1827 Թ. Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԶՈՀՎԱԾ ՌՈՒՍ ԵՎ ՀԱՅ ՁԻՆՎՈՐՆԵՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻՆ

ԾԱՂԿԵՊՍԱԿԻ ՁԵՏԵՂՈՒՄ ՌՈՒՍ ՁԻՆՎՈՐՆԵՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻՆ

Այնուհետև Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը, Ալեքսիյ Բ Պատրիարքը, գեներալ Գրաչովը՝ իր հրամանատարական կազմով, ՀՀ Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը, Ազգային Անվտանգության նախարարար Սերժ Սարգսյանը, դեսպաններ Անդրեյ Ուռնովը և Յուրի Մկրտումյանը, քարձրաստիճան հոգևոր հայրերի և պաշտոնատար այլ անձանց և զինվորականների ընկերակցությամբ, ուղևորվեցին դեպի Էջմիածին քաղաքի հարևանությամբ գտնվող Հուշարձանը (կառուցված 1833 թ.), որը հավերժացնում է 1827 թ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ զոհված ռուս և հայ զինվորների հիշատակը:

Ծաղկեպսակ զետեղելուց և հոգեհանգստյան աղոթք մատուցելուց հետո, ներկաներին իրենց խոսքն ուղղեցին երկու ժողովուրդների Հոգևոր Առաջնորդները՝ վերհիշելով հայ և ռուս ժողովուրդների բարեկամության կարևոր դրվագներ՝ վերստին արժևորելով դրանք: «Մահը չէ, որ մեզ պետք է միացնե, այլ կյանքը և ապագան», ներկաներին դիմելով ասաց Գարեգին Ա Կաթողիկոսը:

Ապա տեղի ունեցավ երկու բանակների միասնական զորահանդես:

ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱԼԵՔՍԻՅ Բ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՆՁՆԵՑ ԱՆԴՐԵԱՍ ԱՌԱՔՅԱԼԻ Ս. ՄԱՍՈՒՆՔՆԵՐԸ

ԱԼԵՔՍԻՅ Բ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԱՆԴՐԵԱՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ

Ռուս և հայ վինվորների հիշատակը հավերժացնող Հուշարձանին իրենց հարգանքի տուրքը մատուցելուց հետո, Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը, Ալեքսիյ Բ Պատրիարքը և նրանց ուղեկցող հանդիսավոր թափորը վերադարձան Ս. Էջմիածին, ուր Մայր Տաճարում տեղի ունեցավ Անդրեաս Առաքյալի՝ Ռուսաց Երկրում առաջին քարոզչի սուրբ մասունքների հանձնման հանդիսավոր արարողությունը: Վեհափառ Հայրապետը, մինչև սուրբ մասունքներով ամփոփված տուփը Ալեքսիյ Բ Պատրիարքին հանձնելը, դրանցով օրհնեց ներկաներին, իսկ ստանալուց հետո նույն արարողությունը կատարեց նաև Ալեքսիյ Բ Պատրիարքը:

Համայն Ռուսիո Հովվապետը երախտագիտությամբ նշեց, որ Անդրեաս Առաքյալի օրհնաբեր մասունքները կդառնան համայն Ռուսիո եկեղեցիներում ամփոփվող մասունքների պսակը և կբավմապատկեն ռուս բարեպաշտ ժողովրդի հոգևոր ցնծությունն ու ուրախությունը: Այս սուրբ վայրից Անդրեաս Առաքյալի մասունքների փոխանցումով՝ մեր Եկեղեցուն և մեր ժողովրդին են անցնում հայ ժողովրդի սերն ու բարի ցանկությունները:

ՄԵԿՆՈՒՄ

Ս. մասունքների հանձնման հանդիսավոր արարողությունից հետո երկու Եկեղեցիների Հոգևոր Առաջնորդները և նրանց ուղեկցող շքախումբը ճանապարհվեցին դեպի «Զվարթնոց» օդանավակայան:

Օդանավակայանում Ալեքսիյ Բ Պատրիարքին ճանապարհելու էին եկել << նախագահի աշխատակազմի ղեկավար Շահեն Կարա-

մանուկյանը, Երևանի քաղաքապետ Աշոտ Միրզոյանը, Հայաստանի Հանրապետությունում ՌԴ դեսպան Անդրեյ Ուռնովը, Ռուսաստանի Դաշնությունում ՀՀ դեսպան Յուրի Մկրտումյանը, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ: Ռուսիո Հովվապետին բարի վերադարձ մաղթելու էին եկել նաև Հայաստանում ռուս հոգևոր համայնքի ներկայացուցիչները:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ